

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջան, Սարկավազի փողոց
հ.128 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի
շենքի

Պատվիրատու՝

<<Էներգացանցշին>> ԲԲԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր	7
Էներգահանայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ	9
1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	10
1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	18
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	18
1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	21
1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա	22
1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	24
2.ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	27
2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	27
2.2 ԿԼԻՄԱՆ	35
2.3 Օդային ավազան	38
2.4 Ջրային ռեսուրսներ	41
2.5 Հողերի նկարագիրը	42
2.6 Հիմնային աշխատանքներ	42
2.7 Կենսաբազմազանություն	43
2.8 Թափոնների կառավարում	44
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	46
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	46
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	47
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	47
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	47
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	48
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	48
3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	49
3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	51
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	52
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	53
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	56
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	59
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	60

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

- | | |
|---|-------------------------------|
| 1.2 Ձեռնարկող՝ | <<Էներգացանցշին>> ԲԲԸ |
| 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ | ք.Երևան, Սարկավազ 128 |
| 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | ք.Երևան, Սարկավազ 128 |
| 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ | ք. Երևան, Ավան վարչական շրջան |

1.1 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Ավան վարչական շրջան, Սարկավագի փողոց հ.128 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագիծը նախատեսվում է իրականացնել ք Երեվան Ավան վարչական շրջան Սարկավագի 128 հասցեում, որը գտնվում է Աճառյան փողոցին հարող տարածքում, Քանաքեռ երկաթգծի կայարանի հարեվանությամբ: Տարածքը 1.3965 հեկտար է:

Համաձայն պատվիրատուի առաջադրանքի տարածքում նախատեսվում է իրականացնել երկու բարձրահարկ բնակելի եվ հասարակական բազմաֆունկցիոնալ համալիր /առաջին հարկի մակերեսը 2530 քմ/:

Նախատեսվում է ընդհանուր 4080 քմ մակերեսով երկհարկանի ավտոկայանատեղի նկուղային եվ կիսանկուղային հարկերում, ինչպես նաև կցակառույց երկհարկանի ավտոկայանատեղի, յուրաքանչյուր հարկը 2000 քմ ընդհանուր մակերեսով: Տարածում նախատեսվում է բացօթյա ավտոկայանատեղի 100 մեքենայի համար 1900 քմ մակերեսով:

Կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է՝ 5600 քմ: Կետային մասնաշենքը /3-րդ / նախատեսվում է մինչև 18 վերգետնյա, իսկ հողամասի արեվմտյան սահմանագծին հարող /1-ից 2-րդ/ մասնաշենքը՝ առավելագույնը 16 ից մինչև 18 հարկերով՝ հարավից հյուսիս աստիճանաձև նահանջ հորինվածքով:

Բնակելի հարկեր բարձրությունը նախատեսվում է՝ 3.30 մետր: Սակավաշարժ խմբի ներկայացուցիչների համար բոլոր հասարակական մասնաշենքերում նախատեսել ենք թեքահարթակներ: Նույն խմբի ներկայացուցիչների համար նախատեսել ենք երկու բնակարան բնակելի 3 -րդ մասնաշենքում: Երկու շենքերում միասին նախատեսում ենք 371 բնակարան և 260 մեքենայի կայանատեղի:

Տանիքը-հարթ-համատեղված, ճկուն փաթեցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով:

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

Հողի ընդհանուր մակերես՝ 13965 քմ;

Կանաչապատման մակերես՝ 5600 ք.մ.;

Կառուցապատման մակերես 2530 քմ;

Կցակառույց կայանատեղի 2000 քմ;

Ստորգետնյա կայանատեղի 2 հարկ 4080քմ;

Մայթ, ճանապարհ, ճեմուղի, բացօթյա կայանատեղի-3835 ք.մ.;

Բնակարանների քանակ՝ 371 հատ;

Ավտոկայանատեղերի քանակ բացօթյա և ստորգետնյա՝ 260 հատ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բազմաֆունկցիոնալ շենքի բնակելի մասի խոհանոցներից, ս/հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է գազօջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի Էներգաարդյունավետությունը նախատեսվում է իրականացնել պահպանելով կառավարության որոշման պահանջները, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր Էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն:

1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Տեղամասի ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից փորձանմուշների ընտրում և փորձարկում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում: Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն Պատվիրատուի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի և ՀՀ տարածքում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների: Դաշտային աշխատանքներն իրականացվել են գլխ. երկրաբան Ն. Մ. Ալեքսանյանի ղեկավարության ներքո, , ԳԵՈՌԵՍԵՆՏԶ ՍՊԸ հորատող խմբի կողմից, **2021թ.** հուլիս ամսվա ընթացքում: Աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր առմամբ հորատվել են 7 հորատանցքեր (2 հորատանցքեր յուրաքանչյուրը 30.0 գծամետր, և 5 հորատանցքեր յուրաքանչյուրը 20.0 գծամետր խորությամբ) ՈւԳԲ-1ՎՍ հորատող հաստոցով, սյունակային եղանակով, չոր մեթոդով, հանուկի ընտրմամբ (հորատման տրամագիծը **9615 Գ**):

Նախագծման փուլը՝ նախագծային և աշխատանքային փաստաթղթավորում. Բարդության աստիճանը ըստ ինժեներա-երկրաբանական պայմանների - II (միջին): Ինժեներա-երկրաբանական տեղագնումն իրականացվել է տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունների տեսողական գնահատման, երկրաբանական և ինժեներա-երկրաբանական վտանգավոր պրոցեսների և երևույթների բացահայտման նպատակով: Հետազոտական աշխատանքների կամերալ մշակումը և սույն եզրակացության կազմումն իրականացվել է Ն. Մ. Ալեքսանյանի կողմից:

Եզրակացություններ

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից փորձանմուշների ընտրում և փորձարկում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի Քանաքեռ վարչական շրջանի տարածքում, նրա հարավ-արևելյան եզրամասում, Աճառյան փողոցի և երկաթգծի գծուղու միջանկյալ մասում, Սարկավազի փ. թիվ 128 հասցեում:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիր հրաբխային սարավանդի սահմաններում, նրա արևելյան եզրամասում, Հրազդան և Գետառ գետերի միջանկյալ լեզվականման ջրբաժանի արևելյան էռոզիոնա-հողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն հարավ-արևելյան թեքություններ, անկումները հիմնականում մեղմ են:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1303.0-1309.0 մետրի սահմաններում:: Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ: Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմասկտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համա-խըմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 30.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 40.0 մետրից խորը:

5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքների վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 30.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 5 շերտեր՝

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերնից-ներքև).

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպառկայանդված, խճա-մանրախճային կազմի, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, երբեմն շինարարական և կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.2-2.3 մետր: Տեխնածին առաջացումներ:

Շերտ թիվ-2 կարբոնատային կեղև խճա-մանրախճային կազմի, մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կարբոնատացած կավավազա-ավազային լցանյութով մինչև 30%, գրունտը ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-0.6 մետր: Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ-3 խճա-մանրախճային գրունտ հրաբխային ապարներից, կավավազային և խարամա-ավազային լցանյութով մինչև 35%, հազվադեպ բազալտների բեկորներով, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.9-4.4 մետր: Չորրորդականի հասակի էյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ-4 մեծաբեկորային բազալտ, անդեզիտա-բազալտ, ծակոտկեն, ճեղքավորված, վերին մասում մասամբ քայքայված խճի աստիճանի, միջբեկորային խարամա-ավազային լցանյութով մինչև 20%, արմատական տեղադրմամբ, միջին ամրության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.9-4.4 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

Շերտ թիվ-5 խարամ հրաբխային, խճա-մանրախճային կազմի, խարամացած, շեղաքարացած, խոռոչային բազալտ, անդեզիտա-բազալտների մեծաբեկորներով, կարմրամոխրագույն հրաբխային մոխրա-ավազային լցանյութով մինչև 30%, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը՝ համատարած, հզորությունը՝ 2.7-7.6 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կարբոնատային կեղևի (շերտ թիվ-2) լցանյութը ցուցաբերում է ենթաոդոդամաշման (суффозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք ու ջրհեռ համակարգ, դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:

7. Համաձայն ՀՀՇՆ 20_04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի պայմանական բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայանական պայմաններ:





Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնտղությունը ծրագրվում է 53,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Հ/Հ	ԱՇԽԱՏԱՆՔԱՆԵՐԻ ԼՈՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԱՅԵՏԸ 4 տարի 5 ամիս																				
		ԱՄՐԱՆՆԵՐԸ																				
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1	Ժամանակավոր շինարարական, դարպասների և դռների տեղադրում																					
2	Ժամանակավոր լուսավորության, ջրամատակարարման և վազոն-տնակների տեղադրում																					
3	Կոյուրյուն ունեցող շինությունների քանդում և տարածքի մաքրում շինարարական ու կենցաղային աղբից																					
4	Փետրակի քանդում 1.85մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով 24ր կարգի գրունտում բարձրում ինքնաթափերն ու տեղափոխում																					
5	Փետրակի քանդում 1.85մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով 12 կարգի գրունտում կուտակումով																					
6	Քանդած գրունտի տեղափոխում 1.85մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով ծառայակցման նշան տեղերը լիցքի և էտիլիցքի համար																					
7	Քաղաքային գրունտի փխրեցում փետրակում փխրեցող էքսկավատորով 20ա կարգի գրունտում և բույրացրելով կուտակելով մի տեղ																					
8	Փխրեցրած գրունտի բարձրում 1.85մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով ինքնաթափերն ու տեղափոխում																					
9	Մետաղական պաշտպանիչ վահանակների տեղադրում փետրակի պատերի լուսաբանչյուր 10մ երկարությամբ ու 5-10մ բարձրությամբ քանդման ընթացքում																					
10	Փետրակի հարթեցում բույրացրելով																					
11	Ա , Բ , Գ , Դ և Ե մասնաշենքերում կաղապարի պատրաստում փակ ալտոկայանատեղի ժապավենային Ե/ր հիմքերի համար																					
12	Փակ ալտոկայանատեղի ժապավենային Ե/ր հիմքերի տակ ալպագոնի փռում																					
13	Փակ ալտոկայանատեղի ժապավենային Ե/ր հիմքերի իրականացում																					
14	Վերելակներ բունկերների հորերի իրականացում																					
15	Խմաշերտի փռում փակ ալտոկայանատեղի հատակների տակ																					
16	Փակ ալտոկայանատեղի հատակի միաձուլ Ե/ր հիմնասալի իրականացում																					
17	Ե/րեսոնե ալի պատրաստում աշտարակային կոունկներ հիմքերի համար																					
18	Փակ ալտոկայանատեղի ամրանալորոված ընտռե հատակի իրականացում																					
19	ՔԵ-573 և ՕՂԶ-80 աշտարակային կոունկների տեղադրում																					
20	Փակ ալտոկայանատեղի պլաների, հենմանների, շրջանակների, պատերի և ծածկի իրականացում միաձուլ Ե/րեսոնեից մինչև 0.00 նիշը																					
21	Փակ ալտոկայանատեղի արտաքին պատերի մեկուտղման աշխատանքներ																					
22	Փակ ալտոկայանատեղի արտաքին պատերի եզրագծերով պաշտպանիչ վահանակների հանում ու տեղափոխում																					
23	Փակ ալտոկայանատեղի արտաքին պատերի եզրագծով հալիցք բույրացրելով ու ձեռքով լուսաբանչյուր 50սմ լիցքից հետո թաց ու յուր տափանցում																					
24	Փակ ալտոկայանատեղի մասնաշենքերի մակերեսից դուրս ծածկի շերտերի իրականացում																					
25	Սյուների, հենմանների, շրջանակների և միջհարկային ծածկերի իրականացում Ե/րեսոնեից 0.00 նիշից վեր հասարակական տարածքներում																					
26	Տախտակամածի պատրաստում և քանդում ներքին պատերի ու միջնորմերի համար																					
27	Ներքին պատերի ու միջնորմերի իրականացում																					
28	Մասնաշենքերի պարագծով մետաղական կոնստրուկցիաներով տախտակամածի պատրաստում և քանդում որպես պաշտպանիչ գուռի, նաև արտաքին պատերի համար՝ հարկերի բարձրացմանը զուգահեռ																					
29	Արտաքին պատերի իրականացում																					
30	Վերելակների բունկերների իրականացում																					
31	Վերելակների ու աստիճանատակակների տեղադրում																					

ԲԱՇԽԱՏԱՆՔԱՆԵՐԻ ԱՐԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԻՎԻ ԻՄԱՐԱՆՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԱՐԱՆԻ ԵՄՈՒՄԸ ՄԱՐԿԱԿԱԳԻ ՈՅ ԶԱՆՈՒ				ԳՆԱՀԱՏՄԱՆ «ԵՆԱԳՈՐԾՆԵՐ» ՍՊԸ	
		ԵՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ		ՓՈՒՆԻ	ԹԵՐԹ
ՆԱԳ	ԳՆԱՀԱՏՄԱՆ			ՄԱՐԿԱԿԱԳԻ	ՄԳՈՐԾՆԵՐ
ՀԱՐՏԱԿԱՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ	ԵՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ		«ԵՆԱԳՈՐԾՆԵՐ» ՍՊԸ	
				ԶԵՆՈՒՄ 0167	

1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցիկ գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:



1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 150 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 8 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿՈՒՇԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿԸ
1	Բուլդոզեր	E10M.0111-1E	հաստ	1
2	Թրթուրավոր էքսկավատոր 1.85մ ³ շերտի տարողությունը	Hyundai R 200 LC -7A	հաստ	2
3	Թրթուրավոր էքսկավատոր փխրեցնող	Hyundai R 380 C 9 SH	հաստ	1
4	Աշտարակային կոունկ - սլաքի երկարությունը - 45.65-50.0 մ - կեռիկի բարձրությունը - 45.00-150.0 մ - բեռնունակությունը - 8-4տ	QTZ 80	հաստ	1
5	Աշտարակային կոունկ - սլաքի երկարությունը - 40.0մ - կեռիկի բարձրությունը - 80-108մ - բեռնաբարձությունը մինչև - 8-4 տ	KB-573	հաստ	1
6	Ավտոմեքենա -28		հաստ	2
7	Տեղում բետոն պատրաստելու սարք		հաստ	2
8	Ավտոբետոնախառնիչ	ABC	հաստ	4
9	Բետոնամուղ պոմպ	Volvo FM12	հաստ	4
10	Կողավոր ավտոմեքենա		հաստ	4
11	Ավտոինքնաթափ 25տ	KMA3	հաստ	4
12	Թրթրան մակերեսային	ԻՎ-117	հաստ	3
13	Թրթրան խորքային	Ս-414	հաստ	3
14	Թրթրան	ԻՎ-113	հաստ	3
15	Էռակցման ապարատ	ՍՏ-2	հաստ	4
16	Հատակներ հարթեցնող	ՍՕ-179 և ՍՕ-155	հաստ	3
17	Ձեռքի տոփանիչ	Ի-157	հաստ	3
18	Հետհար մուրճ	ՍՊ-5Պ	հաստ	3
19	Էլեկտրամուրճ	ԻԷ-4207	հաստ	3
20	Կոմպրեսորային կայան		հաստ	2
21	Գլորն	A-6223A	հաստ	1
22	Կենտրոնախույզ պոմպ	Ս-245	հաստ	1
23	Փոխադրիչ ժապավեն	SU-13		
24	Ջութեհալ սարք	ՍՕ-179	հաստ	1

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $150 \times 5.83 \times 53 / 1000 = 46.4$ տ եւ շինարարական աղբն է 1250 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 8 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 142 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1590 օր

$$W_{\text{խ.տ.}} = (8 \times 0.016 + 142 \times 0.025) \times 1590 = 5848 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1590

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1590 = 2385 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2385 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Սարկավազի փողոցի հարևանությամբ անցնող d=400մմ ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել Աճառյան փողոցով անցնող d=500մմ կոյուղատարին, հեղեղատարը Աճառյան փողոցով անցնող d=500մմ եղեղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի պայմանագրային հիմունքներով տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 860 Կվա հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Կառուցապատողը նոր ենթակայանի կառուցման համար պարտավորվում է տրամադրել 8x12=96 քմ տարածք:

Գազամատակարարումը 1290 խմ/ժամ ծախսով համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի Երևան 1 ԳԲԿ սնող 700մմ կողմնատար գազատարի 5 .9կմ-ից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ

դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տարածքը տեղադրված է ՀՀ ք. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Սարկավազի փողոց 128 հողամասի տարածքում:

Հողամասում առկա է քանդման ենթակա 137 քմ մակերեսով վարչական շենք և 103 քմ մակերեսով պահեստ: Կից գտնվում են բազմաբնակարան բնակելի շենքեր և Աճառյան փողոցը:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.091.700 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիր հրաբխային սարավանդի սահմաններում, նրա արևելյան եզրամասում, Հրազդան և Գետառ գետերի միջանկյալ լեզվականման ջրբաժանի արևելյան եռոզիոնա-հողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն հարավ-արևելյան թեքություններ, անկումները հիմնականում մեղմ են: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1303.0-1309.0 մետրի սահմաններում:

Ջրային ցանցը տարածաշրջանում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, և նրա ձախակողմյան վտակ Գետառ գետը: Հրազդան գետի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Անմիջապես հետազոտվող տեղամասը տեղադրված է Հրազդան գետի և նրա վտակ Գետառ գետի միջանկյալ ջրբաժանի սահմաններում, դրա հարավ-արևելյան լանջերի վերին մասում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին:

Երկրաբանական կառուցվածքը: Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չոր-րորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա-բազալտներ, հրաբխային խարամներ, ավազներ և մոխիր, որոնք ծածկված են բերվածքային առաջացումների շերտերով՝ կավային և խոշորաբեկորային գրունտներ և տեխնոգեն առաջացումներ (լիցքային գրունտ): Հորատման աշխատանքների ընթացքում

մինչև 30.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

Տարածքի մոտեցումներն ապահովված են Աճառյան փողոցից:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Ավան վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	վայր, հասցե
Աշտարակ	հս-աե եզրին
Բնակատեղի	Գետառի աջ ափին, Ավանի Կաթողիկե եկղ. հս
Գերեզմանոց՝ Ավանի հյուսիսային	Գետառի աջ ափին, Ավանի Կաթողիկե եկեղեցուց հս
Մատուռ	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար՝ Տիրիկի	
Խաչքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	

հուշարձան	վայր, հասցե
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար՝ Ուլուֆաբի	
Տապանաքար	
Բնակատեղի Ավան–Առինջ	Մարշալ Բաբաջանյան փ.
Բնակելի տուն	Մարշալ Խուդյակով փ. 97
Բնակելի տուն Գևորգյանի	Մարշալ Խուդյակով փ. 2րդ նրբ. 17
Գերեզմանոց Ավանի կենտրոնական	Ն. Սաֆարյան և Մարշալ Խուդյակով փ. միջև
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար Սարգսի	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	

հուշարձան	վայր, հասցե
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար՝ Մուլքանշահի, Վարժելի և ծնողների	
Խաչքար՝ Խերխաթունի	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար՝ Նեքամատ Աղայի	
Խաչքար՝ Թահայի	
Խաչքար	
Խաչքար՝ Ազարիայի և այլոց	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար՝ Թուխթարի	
Խաչքար՝ Սարգսի, Ազարիայի և Մարգարիտի	
Խաչքար՝ Ստեփանոսի	
Խաչքար՝ Հապիպ Սուլթանի	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար	
Խաչքար՝ Կիրակոսի և Շամիրի	
Կոթող	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար Ամիրգուլի	
Տապանաքար Հովհաննեսի, Համբարձումի և Գավառեցի Մելիքսեթ երեցի	
Տապանաքար	

հուշարձան	վայր, հասցե
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար Ազարիայի	
Տապանաքար	
Տապանաքար Մարտիրոսի	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
Տապանաքար	
